«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

Ա Վ Ա Ր Տ Ա Կ Ա Ն Հ Ե Տ Ա Զ Ո Տ Ա Կ Ա Ն Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք

Հետազոտության թեման՝ Սովորողների մեջ համագործային կարողությունների ձևավորումը առարկայի դասավանդման գործընթացում

Առարկան՝ Հայոց պատմություն

Հետազոտող ուսուցիչ՝ Ջուլիետա Օհանյան

Ուսումնական հաստատություն՝ Դիանի հիմնական դպրոց

Երևան 2022

Բովանդակություն

Ներածություն---------- 3

Սովորողների մեջ համագործային կարողությունների ձևավորումը առարկայի դասավանդման գործընթացում---------- 4

Եզրակացություն---------- 14

Օգտագործված գրականության ցանկ---------- 15

Ներածություն

Թեմայի կարևորությունը: Հիմնական իմաստն աշակերտների՝ որպես գործընկերների խմբի համագործակցությունն է: Գոյություն ունեն համագործակցային կրթության և ուսուցման բազմաթիվ մեթոդներ (նախագծերի մեթոդը, քննարկումը, խնդիրների լուծման վրա հիմնված և դիտարկման միջոցով իրականացվող ուսումը և այլն)։ Այս մեթոդներից յուրաքանչյուրի համար գոյություն ունեն համատեղ աշխատանքի տարատեսակ եղանակներ, վարժություններ և առաջարկություններ։

Համագործակցային մեկ ճիշտ մեթոդ գոյություն չունի, սակայն կա համագործակցային մի քանի եղանակ, և ավելին՝ ներկայումս գոյություն ունեն հարյուրավոր վարժություններ և կազմակերպման եղանակներ։ Հետևաբար, ուսուցիչները կարող են այս կամ այն մեթոդը որդեգրելու փոխարեն ընտրել տվյալ մանկավարժական իրավիճակին համապատասխանող լուծում, իսկ այլ իրավիճակում՝ կիրառել այլ լուծումներ։

Բացի գիտելիք փոխանցելուց, այս եղանակը նպատակ է հետապնդում զարգացնել աշակերտի՝ խնդիրներ լուծելու և համագործակցելու կարողությունները: Խնդիրների լուծման վրա հիմնված ուսման դեպքում աշակերտը պետք է ինքնուրույն հետազոտություն իրականացնի, կարողանա ըմբռնել խնդրի էությունը, ինչպես նաև ունենա ՏՏ ոլորտում որոշ գիտելիքներ. ուսման այս մեթոդի նպատակներից է նաև նշված կարողությունների զարգացումը։ Այս դեպքում ուսուցիչը կատարում է համակարգողի կամ խորհրդատուի դեր։

Համագործակցային ուսուցման ***նպատակն*** այնպիսի մեթոդների կիրառումն է, որոնք ուսման գործընթացը վերածում են սոցիալական շփման։

Համագործակցային ուսուցման տեխնոլոգիան իմաստավորվում է համատեղ գործունեության և կոլեկտիվ հաղորդակցման հիման վրա կազմակերպված ուսուցում: Այդպիսի հաղորդակցման ձևեր կարող են լինել կազմակերպված երկխոսությունը, զուգորդված երկխոսությունը, աշակերտերի զույգերով կամ ավելի մեծ խմբով կազմակերպված աշխատանքը:

Սովորողների մեջ համագործային կարողությունների ձևավորումը առարկայի դասավանդման գործընթացում

Խնդիրների լուծման վրա հիմնված ուսուցումն աշակերտներին սովորեցնում է, թե ինչպես է պետք սովորել: Աշակերտները սովորում են խմբի անդամների հետ համագործակցությամբ՝ լուծումներ գտնելով իրական կյանքից վերցված խնդիրների համար: Միաժամանակ նրանք սովորում են, թե ինչպես առավելագույնս արդյունավետ համակարգեն իրենց ուսման գործընթացը: Այս մեթոդի հիմնական իմաստն այն է, որ աշակերտի կարողություններն օգտագործվում են ոչ թե պատրաստի գիտելիք տրամադրելու, այլ գիտելիք քաղելու նպատակով: Այն դասարաններում, որտեղ աշակերտներն այս մեթոդն են կիրառում, նրանք հասկանում են, թե ինչպես է ուսումը դառնում գիտելիքի որոնման գործընթաց: Աշակերտների մոտ ձևավորվում է քննադատական մտածելակերպ, որն իրենց հնարավորություն է տալիս ձեռք բերվող տեղեկությունները փոխկապակցել այն նպատակի հետ, որի իրականացման համար կարող են օգտագործվել այդ տեղեկությունները: Խնդիրների լուծման և ուսման գործընթացի հաջողությունը կախված է աշակերտների դպրոցական և արտադպրոցական արդյունավետ աշխատանքից: Առաջադրանքների խմբային կատարումը խնայում է ժամանակը և զարգացնում է խմբի անդամների շփման և բանավոր խոսքի կարողությունները:

Խնդիրների լուծման վրա հիմնված ուսումը նորարարական մեթոդ է, որի դեպքում օգտագործվում են նոր նյութը լուծում պահանջող խնդրի տեսքով ներկայացման մանկավարժական կառուցողական մեթոդներ:[1]

Այս մեթոդի կիրառման հիմնական քայլերն են՝

ա) առաջադրանքի սահմանումը,

բ) տեղեկությունների որոնման տարատեսակ ռազմավարությունները,

գ) տվյալներ և տեղեկություններ ստանալու մատչելիությունը (որտեղ),

դ) տեղեկությունների օգտագործումը և խնդիրների լուծումը,

[1] Լ. Թորքոմյան, <<Մանկավարժական հիմունքներ», էջ. 28

ե) սինթեզը,

զ) գնահատումը:

Համագործակցային քննարկումը աշակերտների հաղորդակցման և ճարտասանական կարողությունները զարգացնելու լավ եղանակ է: Քննարկման ընթացքում բոլոր մասնակիցները հնարավորություն ունեն խոսելու (պայմանով, որ սահմանված կանոնները պահպանվում են):

Այս եղանակի փուլերն են՝

ա) քննարկումը վարողն առարկայի վերաբերյալ հակասական հայտարարություններ է անում:Այդ հայտարարությունները փակցված են սենյակի տարբեր մասերում.

բ) յուրաքանչյուր աշակերտ, ըստ իր կարծիքի/ընկալման, կանգնում է այդ հայտարարություններից մեկի մոտ.

գ) քննարկման համար խմբեր ձևավորելուց հետո վարողը ժամանակ է սահմանում հնչեցված հայտարարությանը կողմ փաստարկները ներկայացնելու համար.

դ) փաստարկները պատրաստելուց հետո յուրաքանչյուր խումբ ընտրում է իր խոսնակին. ե) խոսնակները նստում են սեղանի շուրջ և ստանում այսպես կոչված «քննարկման խաղանիշեր» (3-6 հատ՝ կախված քննարկման համար սահմանված ժամանակահատվածից և մասնակիցների թվից):[2]

զ) խմբի անդամները շարվում են իրենց խոսնակի հետևից և նույնպես խաղանիշեր են ստանում: Խաղանիշերն օգտագործվում են հետևում կանգնած աշակերտներին քննարկման մեջ ներգրավվելու նպատակով: Որպես այլընտրանք, խմբի անդամներն իրենց խաղանիշերը կարող են տալ իրենց խոսնակին, եթե վերջինս սպառել է իր բոլոր խաղանիշերը, սակայն դեռևս ներկայացնելու փաստարկներ ունի.

է) Իր փաստարկներից յուրաքանչյուրը ներկայացնելիս խոսնակն իր խաղանիշերից մեկը դնում է սեղանի կենտրոնում: Խաղանիշերը որոշում են ելույթների թիվը: Մեկ փաստարկի գինը մեկ խաղանիշ է: Այս եղանակն օգտագործելով՝ ուսուցիչը ոչ

[2] 1.Լ. Թորքոմյան, <<Մանկավարժական հիմունքներ», էջ 12
2.Բաբանսկի հատոր առաջին, էջ 4

միայն կառավարում է քննարկման ժամանակը, այլև աշակերտներին սովորեցնում է իրենց փաստարկները ձևակերպել հստակ և հակիրճ:

Ուսումնական խմբի անդամների միջև փոխազդեցություն կազմակերպելու գաղափարը ներդրվել է մի շարք մանկավարժական ուղղություններում, որոնք պատմականորեն կայացել, առանձնացվել ու մանկավարժության մեջ ամրագրվել են որպես յուրատեսակ մանկավարժական ավանդույթներ: Դրանց թվին են պատկանում այնպիսի հայտնի ուղղություններ, ինչպիսիք են.

Բել-Լանկաստերյան համակարգը. - Դեռ XVIII դարի վերջերից սկիզբ առած, հետագայում լայն տարածում գտած մեթոդներից է: Ուսումնական պարապմունքների կազմակերպման հիմնական սխեման հետևյալն է. ուսուցիչն ուսումնական խմբի անդամներից ընտրում է մի քանի ընդունակ աշակերտների և հիմնականում աշխատում նրանց հետ: Ընտրված աշա- կերտներից յուրաքանչյուրին կցվում է աշակերտական փոքրաքանակ խումբ, որտեղ նրանք կատարում են ուսուցչի դերը: Այս ձևը հնարավորություն է տալիս մի կողմից՝ որոշ չափով հաշվի առնել աշակերտների անհատական առանձնահատկությունները, մյուս կողմից՝ լուծել մանկավարժական կադրերի պակասի պրոբլեմը:

Բրիգադային մեթոդը. - XX դարի առաջին կեսին լայն տարածում գտած մոտեցումներից է: Ուսումնական խումբը բաժանվում է փոքր ենթա- խմբերի՝ բրիգադների: Յուրաքանչյուր բրիգադում փոխօգնության և համագործակցության միջոցով իրագործվում են ուսումնական նպատակները, իսկ յուրաքանչյուր աշակերտի արդյունքը գնահատվում է ընդհանուր բրիգադի ցուցանիշներով:

Ռիվինյան երկխոսութենական զուգորդությունների մեթոդը. – Արդեն XX դարասկզբին որոշ մանկավարժներ ուսումնական պարապմունքներ կազմակերպելիս սկսեցին օգտագործել աշակերտների՝ զույգերով հաղորդակցման ձևերը: Այս նորամուծության հիմնադիրն ու հիմնական կիրառողը Ա.Ռիվինն էր: Նրա կազմակերպած պարապմունքներն առաջին հայացքից բավական պարզ էին:

Սովորողներից յուրաքանչյուրն իր ուսումնական նյութը յուրացնելու համար աշխատում էր դասընկերներից մեկի հետ: Որոշ ժամանակ համատեղ աշխատելուց

հետո նա այդ դասընկերոջից բաժանվում էր, մոտենում մեկ այլ աշակերտի և սկսում աշխատել նրա հետ: Հաղորդակցվելով զույգերով՝ մեկը մյուսի հետ, աշակերտները կատարում էին տարբեր աշխատանքներ՝ իրար բացատրում էին նոր թեմաները, համատեղ լուծում խնդիրներ, քննարկում տարբեր հարցեր, մեկը ստուգում էր մյուսի՝ նյութի յուրացման մակարդակը և այլն: Սակայն արտաքնապես պարզ թվացող այսպիսի պարապմունքներն ունեին իրենց ներքին տրամաբանությունը, Հանրակրթության կազմակերպման հիմնահարցերը նպատակաուղղվածությունը և կազմակերպվածությունը: Հետագայում Ռիվինի հայտնագործությունները զարգացվեցին ու կիրառվեցին իր աշակերտների ու հետնորդների կողմից: Շարժման ներկայացուցիչների (Ռիվին, Վիխման, Բրեյտերման, Կոլեսնիկով և ուրիշներ) մտքով անգամ չէր անցնում, որ իրենց հայտնագործությունները ոչ միայն սովորական մանկավարժական հնարքներ են, այլև կարող են հիմք հանդիսանալ ընդհանրապես ուսուցման կազմակերպման նոր եղանակի անցման համար:[3]

Մյուս՝ մեզ հայտնի մանկավարժական տեխնոլոգիան համագործակցության մանկավարժական տեխնոլոգիան է:

Այս տեխնոլոգիայի համար հիմք են հանդիսացել ամերիկացի հոգեբան և մանկավարժ Ջոն Դյուիի, ռուս հոգեբան Լև Վիգոտսկու և շվեյցարացի հոգեբան Ժան Պիաժեյի աշխատությունները:

Համագործակցային մանկավարժական տեխնոլոգիայի կիրառումը կարելի է պայմանականորեն բաժանել 3 հիմնական փուլերի

1. ուսումնական նյութի նախապատրաստում
2. աշակերտների նախապատրաստում համատեղ աշխատանքին
3. բուն ուսումնական աշխատանքի ընթացքը

Իմ կարծիքով սա այն տեխնոլոգիաներից է, որի ներդրումը ներառական կրթություն կարևոր պայման է հանդիսանում: Քանի որ ներառական կրթության ամբողջ նպատակը կրթության հատուկ կարիք ունեցող երեխաների ներգրավելն է ուսուցման

[3] 1Բաբանսկի հատոր առաջին, էջ 25

գործընթացին և բացի այդ ինտեգրելը կոլեկտիվում՝ առանց որևէ խտրականության: Իսկ այս տեխնոլոգիան հենց ինքը մի միջոց է, այս նպատակը իրականացնելու համար, քանի որ ինչպես նշվեց այս տեխնոլոգիայի հիմքում ընկած է համագործակցային, կոլեկտիվ աշխատանքի ձևը և սա մի միջոց է որով կրթության առանձնահատուկ կարիք ունեցող երեխաները կարող են համատեղ աշխատել մյուս աշակերտների հետ: Դա կարող է իրականացվել թե զույգերով և թե խմբակային աշխատանքի ձևով:[4] Սա կնպաստի նրան, որ թույլ կարողություններով երեխան կաշխատի և կհամագործակցի առավել բարձր կարողութուններով աշակերտի հետ և աջակցություն կստանա վերջինիս կողմից: Հայտնի է, որ խմբակային կամ զույգերով աշխատանքը ավելի է մտերմացնում աշակերտներին, այսինքն՝ դա նպաստում է, որ կրթության հատուկ կարիք ունեցող երեխաները իրենց զգան կոլեկտիվի մի մաս և ունենան իրենց ուրույն դերը: Այս ամենը առավել լավ պատկերացնելու համար տեսնենք, թե իրականում այս տեխնոլոգիան ինչպես է կիրառվում ուսուցման գործընթացում.

Ուսումնական նյութի նախապատրաստական փուլում կատարվում է

- ուսումնական նյութի ընտրություն, դրա բաժանում տրամաբանական հատվածների
- լրացուցիչ նյութի ընտրություն
- թիմային աշխատանքի տեսակի ընտրություն

Աշակերտների նախապատրաստումը համատեղ աշխատանք կատարելու կարողությունների ձևավորման փուլում կատարվում է

- Ուրիշին լսելու կարողությունների ձևավորում
- Ուրիշի տեսակետի մասին կարծիք արտահայտելու կարողությունների ձևավորում
- Սեփական կարծիք արտահայտելու և այն հիմնավորելու կարողությունների ձևավորում
- Անհրաժեշտ ինֆորմացիա հայթայթելու կարողությունների ձևավորում

[4] Лихачев Б.Т., Педагогика, курс лекций, 2009, էջ. 23
Подласый И.П .., Педагогика, 2003, էջ 58

- Մտապատկերը խոսքի միջոցով արտահայտելու և բանավոր խոսքը մտապատկեր դարձնելու կարողությունների ձևավորում[5]
- Վերլուծություն և համադրություն կատարելու կարողությունների ձևավորում[6]
- Եզրահանգումներ կարատելու կարողությունների ձևավորում և այլն

Բուն ուսումնական աշխատանքի կատարման փուլում կարող է կազմակերպվել

- Փոխադարձ ուսուցում ուսուցիչ – աշակերտ դեերային խաղի տեսքով
- Զույգերով մտքերի փոխանակման, լրացուցիչ տեղեկատվության որոնման տեսքով
- Փոքր և մեծ խմբերով յուրացման և որոնողական աշխատանք կազմակերպելու միջոցով

Ուսուցման այս տեխնոլոգիայի կիրառումը նպաստում է

- Ուսուցման արդյունավետության բարձրացմանը՝ ավելի լավ է յուրացվում և մտապահվում ուսումնական նյութը
- Տրամաբանական մտածողության զարգացմանը
- Խթանում է ուսման բարձր ճանաչողական դրդապատճառների ձևավորմանը:

Համագործակցային ուսուցումն արագորեն դարձավ ժամանակակից և ցանկալի թեմա վերապատրաստման դասընթացներում, ինչպես նաև դպրոցի զարգացման նախագծերում: 1994-ին Ֆինլանդիայում այս թեմայով Ասկո Լեպիլամպիի և իմ հեղինակությամբ առաջին գիրքը հրատարակվեց: Այդ ժամանակ երկրի բոլոր մասերում հազարավոր ուսուցիչներ մասնակցում էին համագործակցային ուսուցման 2-8-օրյա վերապատրաստման ծրագրերի: Համագործակցային ուսուցման միջազգային մասնագետներ, ինչպիսիք են Յիլ Շարանը և Շլոմո Շարանը, էլիզաբեթ Կոհենը, Դավիդ

---

[5] 1. Լ. Թորքոմյան, <<Մանկավարժական հիմունքներ», էջ 58
2. Բաբանսկի հատոր առաջին, էջ105

[6] Бордовская Н.В., Реан А.А. Педагогика, 2009, էջ. 69
Сластенин В. А., Шиянов, Общая педагогика, М 2004, էջ. 87

Ջոնսոնը և Ռոջեր Ջոնսոնը, վերապատրաստում էին ուսուցիչներին և վերապատրաստողներին:

Միևնույն ժամանակ Ազգային նոր կրթակարգն ընդգծում է սոցիալական հմտությունների դերը, որոնց կարելի է հասնել՝ օգտագործելով ուսուցման աշակերտակենտրոն մեթոդներ, բարձրացնելով ուսուցման որակը: Շատերն էին հավատում, որ համագործակցային ուսուցումը կիրականացնի այս ակնկալիքները: Իսկապես, կրթակարգով բարեփոխումներն ու համագործակցային ուսուցման տարածումը փոխկապակցված էին: Դպրոցներում Կրթակարգի ներդրումից հետո համագործակցային ուսուցման մեթոդներն ուսուցիչները սկսեցին մշտապես կիրառել:

Հիմնավոր վերապատրաստման պակաս: Ուսուցիչների մեծամասնությունը կարծում է, որ հնարավոր է տիրապետել համագործակցային մեթոդներին՝ հաճախելով միայն կարճաժամկետ դասընթացների: Հետևաբար շատ ուսուցիչներ մակերեսային գիտելիքներ ունեն այս ուսուցման վերաբերյալ, չունեն խորը և լայն ընկալում, կիրառման հմտություն:

Համագործակցային ուսուցումը անբավարար է ներառված մանկավարժական ուսուցման ծրագրերում: Համալսարանական շատ ծրագրեր դեռ թերագնահատում են համագործակցային ուսուցման դերը ուսուցման մեջ և մանկավարժական կրթության հարցում: Թեև այն ներառված է մանկավարժական կրթության հայեցակարգում, սակայն հիմնականում համարվում է ուսումնասիրության տեսական նյութ: Հետևաբար, նոր պատրաստվող ուսուցիչները լսել են համագործակցային ուսուցման մասին, սակայն այդ մեթոդները ուսուցման գործում կիրառելու բավարար փորձ չունեն:[7]

Ֆինլանդիայում համագործակցային ուսուցման լուրջ գործնական մշակումներ չեն ստեղծվել, բացառությամբ Վիլիո Կոհոնենի և գործընկերների (2001թ.) ու Ջոն Բերրիի (2002թ., 2003թ.) մի քանի աշխատանքների: Օրինակ՝ ոչ մի դոկտորական թեզ չի գրվել

[7] 1.Լ. Թորքոմյան, <<Մանկավարժական հիմունքներ»
2.Բաբանսկի հատոր առաջին

Ֆինլանդիայում համագործակցային ուսուցման մասին, հակառակ նրան, որ ուսուցչության մեջ այն գնահատված և տարածված է:

Դպրոցներում համագործակցային ուսուցումն առավել լավ կիրառելուն վերաբերող հարցերից մեկը հրահանգավորող նյութերի անմատչելիությունն է: 2002թ. Շլոմո Շարանը ֆինն ուսուցիչների և վերապատրաստողների համար խմբագրել են Համագործակցային ուսուցման ձեռնարկի (2002թ.) ֆիննական տարբերակը: Սակայն ուսումնական նյութերը՝ աշխատանքային թերթիկեր, խաղեր, նախագծային ուղղություններ և այլն, դեռ չեն օգտագործվում: Շատ ուսուցիչներ կան, որ համարում են, որ դժվար է ձեռնարկի նյութերը դասարանին հասցնելը: Հրատարակիչները չեն հետաքրքրվում մեթոդաբանությանը վերաբերող ինչ-որ նյութի արտադրությամբ:

Ավարտելով ասեմ, որ դպրոցներում համագործակցային ուսուցման զարգացումը կախված է ուսուցիչներից, որոնք կարևորում են սովորողի հասարակական և ճանաչողական զարգացումն ավելի, քան թեստերն ու քննությունները: Մինչև հիմա համագործակցային ուսուցումն ունեցել է զարգացման համար անհրաժեշտ հիմք: PISA -ի ուսումնասիրությունը պարզել է, որ ուսուցիչներին հարգելու և վստահելու ֆիննական եղանակը ոչ միայն ուսումնական լավ արդյունք է ապահովում, այլ նաև ուղղորդում է ուսուցիչներին մշտապես ներդնելու մանկավարժական նոր գաղափարներ՝ առանց վախենալու սխալվելուց կամ ձախողման «մեղքից»: Դեռ շատ հետազոտություններ և երկարաժամկետ մանկավարժական զարգացման ծրագրեր են պետք համագործակցային ուսուցումը մանկավարժության մեջ ուսուցիչների և ուսուցիչ պատրաստողների համար մշտական մասնագիտական հետազոտությունների առարկա դարձնելու համար: Այնուամենայնիվ, վերադառնալով սովորողների գաղափարներին և ուսուցիչների համոզմունքներին, նշենք, որ համագործակցային ուսուցումն ունի դպրոցներում կարևորագույն մոտեցում դառնալու, այս աշխարհին համապատասխան գիտելիքներով խաղաղասեր քաղաքացի կրթելու բոլոր նախադրյալները:

Պատմության ուսուցումը հանրակրթական դպրոցում հարուստ ավանդույթներ ունի: Հանրակրթական միջնակարգ դպրոցներում ուսուցանվում է հայոց պատմություն և զուգընթացաբարէ ընդհանուր պատմություն: Այսօր հայոց և համաշխարհային

պատմության դասավանդումը նոր իմաստ և բովանդակություն է ստացել, քանի որ երկու դասընթացներն էլ նպատակ ունեն դպրոցականներին պատկերացում տալ մարդկային քաղաքակրթության զարգացման ուղիների և նվաճումների մասին: Դպրոցներում կարևորվում և արժեքավորվում են հայոց և համաշխարհային պատմության նոր հարաբերակցության, սերտ կապերի և միմյանց լրչացնելու խնդիրները: Այդ նպատակով միևնույն դարաշրջանի դեպքերն ու իրադարձությունները ուսուցանվում են համաժամանակյա ուսուցման միջոցով, օգտագործելով միջառարկայական, ներառարկայական մշտական կապերը: Դա հնարավորություն է տալիս համեմատել պատմական երկու դասընթացների մեջ եղած կապերն ու հիմնական գծերը և ձևավորել գիտելիքների ամբողջական համակարգ, միաժամանակ պարզելով պատմական երևույթների ընդհանուր և առանձնահատուկ կողմերը՝ ինչպես հայոց պատմության, այնպես էլ այլ երկրների պատմության օրինակով: Օրինակ <<հայ ժողովրդի ծագումն ու կազմավորման սկիզբը>> թեմայի ուսուցման ժամանակ դպրոցականների ուշադրությունը անհրաժեշտ է կենտրոնացնել հայ ժողովրդի ծագման և կազմավորման բարդ ու երկարամյա գործընթացի վրա, ցույց տալ, որ հայ ժողովուրդը տեղաբնիկ է, և որի մեջ միավորել լեռնաշխարհի բոլոր ցեղերին: Նախնական պատկերացում տալ հնդեվրոպացիների և հնդեվրոպական լեզվաընտանիքի մասին: Հին աշխարհի պատմության ուսումնասիրումը ընդգրկում է մարդկային հասարակության պատմությունը, նրա սկզբնավորումից մինչև 5-րդ դարի վերջը:

Նախնադարյան համայնական կարգերի միլիոնավոր տարիների պատմությունը և ստրկատիրական հասարակարգը: 6-րդ դասարանի դասընթացով դպրոցականները ծանոթանում են հին աշխարհում մարդկային հասարակության զարգացման մի շարք օրինաչափությունների հետ: Օրինակ, հին արևելքի հնագույն ժողովուրդներն ու երկրները հիմնականում լինելով մերձարևադարձային կլիմայական գոտում, գտնվում էին հսկայական գետերի ավազաններում, շրջապատված էին պտղատու հովիտներով, արհեստական ոռոգման զարգացած համակարգով, ունեին ջրովի հողագործություն, զարգացած մշակույթ, զբաղվում էին առևտրով, արհեստներով, կառուցում էին հսկայական կառույցներ, որոնք մինչև այսօր իրենց տեսքով և գեղեցկությամբ հիացնում

էին ժամանակակից հասարակությանը: 7-րդ դասարանում աշակերտները 6-րդ դասարանի գիտելիքների գիման վրա սկսում են ուսումնասիրել <<Միջին դարերի պատմությունը>>: Նախնադարյան և հին հասարակարգերը 3-4-րդ դարերում գտնվում էին քայքայման վիճակում և դրանց բաժանումից էլ սկզբնավորվեց միջնադարյան հասարակությունը: Այդ ժամանակաշրջանում սկիզբ առան բարբարոսական նվաճումները, և 7-րդ դարի սկզբին վերացավ Արևմտյան հռոմեական կայսրությունը, իսկ նրա տարածքում առաջացան բարբարոսական թագավորություններ, որը հանգեցրեց ավատատիրական հասարակության ձևավորման: [8]

[8] 1.Լ. Թորքոմյան, <<Մանկավարժական հիմունքներ»
2.Բաբանսկի հատոր առաջին
3.Ա. Հովհաննիսյան, Կ. Հարությունյան, Ս. Խրիմյան և ուրիշներ, «Համագործակցային ուսուցում ձեռնարկ», 2006թ

Եզրակացություն

Դասընթացի միջոցով աշակերտները տեղեկություններ են ստանում մարդկության պատմության կարևորագույն իրադարձությունների վերաբերյալ, որոնք նպաստում են սոցիալական որակներ ունեցող անձի կայացմանը, որը գիտակցում է հիմնարար արժեքների առաջնայնությունը և ձգտում է իր կրթվածության բարձրացմանը: Դասընթացի նպատակներից է նաև աշակերտներին սովորեցնել գտնել պատճառահետևանքային կապերն պատմական գործընթացներում, հասկանալ ու բացատրել տարբեր երկրների ու ժողովուրդների զարգացման յուրահատկությունը, այն պայմանավորող գործոններով:

Պատմության դասընթացում պետք է գլխավոր ուշադրությունը դարձնել պատմական զարգացման տվյալ փուլում առաջընթացը կրող ազգերին ու հասարակություններն:

Պատմության ուսուցման մեջ կարևոր դեր և նշանակություն ունի դասագրքի հետ կատարվող աշխատանքը: Այն օգնում է, որպեսզի աշակերտներին հասկանալի դառնան պատմական երևույթների զարգացման բնույթը: Դասագիրքը գիտահանրամատչելի մյուս գրքերից հիմնականում տարբերվում է նրանով, որ այն մեթոդապես մշակված է միջնակարգ հանրակրթական դպրոցի պատմության ծրագրի պահանջների հիման վրա:

Երկարամյա մանկավարժական աշխատանքի փորձը ցույց է տվել, որ ուսուցչի կողմից նոր նյութի շարադրման ժամանակ աշակերտները երբեմն նյութը ընկալում են պասիվորեն, որը հետո պետք է խորացվի և ամրապնդվի աշակերտների ինքնուրույն աշխատանքի ընթացքում: Ուսուցչի խնդիրն է հաստատակամորեն և համառ կերպով սովորողների մեջ պատվաստել դասագրքի վրա ինքնուրույն աշխատելու, մտածելու, դատելու հմտություններ և ուսուցիչը պետք է կարողանա սերտ համագործակցություն սերմանել բոլոր աշակերտների միջև: Շատ կարևոր է նաև համագործակցությունը ուսուցիչների միջև, որը բարձրացնում է կրթության որակը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Լ. Թորքոմյան, <<Մանկավարժական հիմունքներ»
2. Բաբանսկի հատոր առաջին
3. Ա. Հովհաննիսյան, Կ. Հարությունյան, Ս. Խրիմյան և ուրիշներ, «Համագործակցային ուսուցում ձեռնարկ», 2006թ
4. Սերգեյ Մանուկյան Ընդհանուր մանկավարժագիտություն- 2005թ.
5. Ամիրջանյան Զրույցներ սկսնակ ուսուցչի հետ
6. Бордовская Н.В., Реан А.А. Педагогика, 2009